# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | վերնաշապիկներ | վերնաշապիկներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Վերնաշապիկ` կարճաթև, սպիտակ գույնի ԳՕՍՏ 19867-93: Արտիկուլ-82039 կամ համանման կտորից 1մ2, քաշը` 180գր., բաղադրությունը` 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է` լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից, կտորի գույնի։ Մեջքը՝ կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը՝ էլաստիկ ժապավենով ձգված։ Օձիքը՝ ծալովի, թևերը՝ ներկարված կարճ և շերտակարերով։ Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ։ Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ։ Գրպանների կափույրների կոճակները՝ 14 մմ, մնացածը՝ 11մմ, երկու անցքով։ Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների։ Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի։ Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ։ Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը։ Փաթեթավորումը՝ եռաշերտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ։ Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ՝ ՀՀ–ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ՝ հաստատելու համար համապատասխան ստորաբաժանմանը։ Պատվիրատուն իրավունք ունի՝ յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակից կատարել նմուշառու և ուղարկել փորձաքննության։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |